ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆՆԱ ԱՐԱՅԻ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

ԺԲ.00.03 (մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МКРТЧЯН АННА АРАЕВНА

ПРАВО САМОЗАЩИТЫ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – «Частное право – гражданское; торговое (коммерческое); международное частное; семейное; трудовое право; право социального обеспечения»

ЕРЕВАН - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Վ. Դ. Ավետիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր **Ա. Մ. Հայկյանց**
իրավ. գիտ. թեկնածու,
դոցենտ **Ա. Ա. Թավադյան**

Առաջատար կազմակերպություն՝ Արդարադատության ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. ապրիլի 26-ին ժ. 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում։

Սեղմագիրն առաքվել է 2023թ. մարտի 16-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավ. գիտ. թեկ., ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор
В. Д. Аветисян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
А. М. Айкянц
кандидат юрид. наук, двцент
А. А. Тавадян

Ведущая организация: **Академия Юстиции**

Защита состоится 26-ого апреля 2023г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 16-ого марта 2023г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից իրավական համակարգն անձի իրավունքների ոչ միայն իրացման, այլև դրանք պաշտպանելու իրավական հնարավորությունն ապահովող երևույթ է: Քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի միջոցների կողքին իրավական միջոցներն են, որ կոչված են ապահովելու անհրաժեշտ պայմանները անձանց սուբյեկտիվ իրավունքների իրականացման համար: Այս համատեքստում քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը կարևոր դերակատարություն ունի մասնավոր իրավունքում:

Իրավունքի արդի ընկալումների տեսանկյունից իրավունքների ինքնապաշտպանությունը որպես քաղաքացիաիրավական երևույթ ամրագրված է իրավական տարբեր համակարգերում: Օրենսդրական մոտեցումներն ու կարգավորումները շատ տարբեր են: Մի կողմից հնարավորություն ընձեռելով օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրականացնել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանություն, ընդհուպ նախատեսելով պայմանագրային հարաբերություններում, մյուս կողմից իրավունքների ինքնապաշտպանության իրականացումը հնարավոր և օրինաչափ համարել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության ինստիտուտի կիրառման վերաբերյալ պատկերացումները բավականին ընդգրկուն են և ընդունված է համարել, որ ինքնապաշտպանությունը կարելի է կիրառել քաղաքացիական բոլոր իրավահարաբերությունների ընթացքում: Այն սահմանափակված չէ միայն որոշակի իրավունքների պաշտպանության դեպքերով: Քաղաքացիական իրավունքի տեսական աղբյուրներում առավել տարածված է այն տեսակետը, որ իրավունքների ինքնապաշտպանությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքների պաշտպանության ընդհանուր ձև և ոչ հատուկ:

Հայրենական իրավագիտությանը ևս ծանոթ է քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը: Այն դիտարկվել է երկու ասպեկտներով՝

- Քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ամրագրում ստացած նորմեր և
- քաղաքացիական իրավունքի կողմից ուսումնասիրվող իրավական երևույթ:

Նշված ասպեկտների ուսումնասիրությունը փորձել ենք իրականացնել այս աշխատանքի շրջանակներում:

Կատարված հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է յուրաքանչյուր անձի իրավունքների ինքնապաշտպանության ապահովման կարևորությամբ: Հետազոտության առարկա հանդիսացող իրավունքի ինստիտուտը ներպետական օրենսդրությունում կարգավորված է թե-

րի և հաճախ օգտագործվում է որպես պաշտպանական համակարգի դրսևորում: Բացի այդ, իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտը որպես իրավունքների պաշտպանության առանձին ձև ուսումնասիրության առարկա չի դարձվել հայրենական իրավագիտության կողմից: Այս աշխատությունը հանդիսանում է առաջին համալիր փորձը, այս թեմայի համակարգային առումով ներկայացումը:

Թերևս այս դրույթների գոյությունը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթում հռչակում է դրանց կիրարկումն ապահովելու հրամայականը: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական միասնական համակարգ, որը կերաշխավորի անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի ինքնապաշտպանության իրավական հնարավորությունը և գործնական կիրառության տեսանկյունից կունենա նվազագույն խոցելիություն: Պետությունն ի դեմս իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների, պիտի շահագրգռված լինի անձի իրավունքների ինքնապաշտպանության արդյունավետ կառուցակարգեր ունենալու գործում: Այդ հանգամանքը ապահովում է մասնավոր իրավահարաբերությունների կայունություն: Իրավահարաբերություններին ներազդելու ցանկացած դեպք պետության համար լրացուցիչ ծանրաբեռնվածության ու անխուսափելիորեն սոցիալական լարվածության իրավիճակների խթան կարող է հանդիսանալ: Պետության պարտականությունը իրավական դրույթների ամրագրումն է, որոնք հիմք են հանդիսանում սուբյեկտիվ իրավունքների կիրառման և պաշտպանության համար: Այդ իսկ պատճառով իրավունքների ինքնապաշտպանությունը որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձև շարունակում է մնալ օրենսդրի և տեսաբանների ուշադրության կենտրոնում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի համակարգային ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, տեսական և գործնական հիմնախնդիրների վերհանումը, կատարված համալիր հետազոտության արդյունքների հիման վրա առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկների մշակումը:

Այդ նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել իրավունքի ինքնապաշտպանության էությունը, իրավահարաբերությունների առանձնահատկությունները, ինստիտուտի ձևավորման և զարգացման պատմությունը,
- վերլուծել ՀՀ քաղաքացիական օրենսդրության կարգավորումները քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների վերաբերյալ՝ համադրելով գիտագործնական նյութերն ու առկա պրակտիկան,
- ուսումնասիրել իրավունքի ինքնապաշտպանության և քաղաքա-

ցիական իրավունքի այլ ինստիտուտների փոխհարաբերակցությունը,

- մշակել իրավունքների ինքնապաշտպանության գործուն համակարգ՝ հիմնված իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի լայն և նեղ իմաստային կիրառման վրա:
- հիմնավորել իրավունքների ինքնապաշտպանության որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ոչ յուրիսդիկցիոն ձևի արդյունավետությունը, համաչափության և իրավաչափության պայմանները,
- ուրվագծել քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության տեսակների շրջանակը, ամրագրում ստացած իրավունքի պաշտպանության եղանակները և օրենդրական սահմանումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում իրավունքի ինքնապաշտպանության իրավահարաբերությունները, իսկ առարկան՝ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը՝ առկա հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: *Հայրենական իրավագիտության շրջանակներում իրավունքների պաշտպանության միջոցների ուսումնասիրության, այդ թվում իրավունքների ինքնապաշտպանության ուսումնասիրության ընթացքում համակարգային անդրադարձեր չեն կատարվել իրավունքների ինքնապաշտպանության իրավական էությանը, կարգավիճակին, ինչպես նաև իրավունքների ինքնապաշտպանության եղանակների, միջոցների համակարգին:*

Կատարված հետազոտության նպատակն է հանդիսացել բացահայտել ինքնապաշտպանության բնույթն ու էությունը, տեղը և դերը քաղաքացիական իրավունքում, ինքնապաշտպանության վերաբերյալ գիտական մոտեցումների համալիր ուսումնասիրության և վերլուծության հիման վրա օրենսդրական կարգավորումների թերությունների վերհանումն ու առաջարկությունների ներկայացումը:

Գիտական հենքի նախապատրաստումը, որը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացիական օրենսգրքում իրականացնել օրենսդրական համալիր փոփոխություններ և լրացումներ քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի լիարժեք ամրագրման համար: Օրենսդրական ամրագրումներն իրենց հերթին կնպաստեն ճիշտ և միատեսակ պրակտիկայի ձևավորմանը, որն էլ անուղղակիորեն կնպաստի քաղաքացիական հարաբերությունների մասնակիցների և սուբյեկտների իրավունքների և օրինական շահերի գործուն երաշխիքների ապահովման համար:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսության նորմատիվային հենքը կազմել է իրավունքի ինքնապաշտպանության իրավահարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Աշխատանքի իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական ակտերը, ՀՀ

վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման նպատակներով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի և այլ մեթոդներ, ինչպես նաև մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց օգնությամբ վերլուծվել է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների՝ իրավունքի ինքնապաշտպանության իրավահարաբերությունների կարգավորմանը վերաբերող օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, բացահայտվել են այդ բնագավառում առկա տեսական և գործնական հիմնահարցերը, առաջարկվել են դրանց լուծման գործնական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Սույն ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ *առաջին համալիր հետազոտությունն է, որը համակարգային* կերպով բացահայտում է ինքնապաշտպանության բնույթն ու էությունը, տեղը և դերը քաղաքացիական իրավունքում՝ բացահայտելով իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները, եղանակները ինչպես նաև իրավունքների ինքնապաշտպանության և պաշտպանության այլ ձևերից անջատ լինելուն ուղղված բազմաշերտ համալիր վերլուծությունը: Ատենախոսության շրջանակներում քննարկման առարկա է դարձվել իրավունքի ինքնապաշտպանության նյութաիրավական ասպեկտը, այն դիտարկելով ոչ թե որպես դատավարական իրավունքի ընթացքում իրականացվող գործողություն, այլ նյութական իրավունքի լիարժեք ինստիտուտ:

Ատենախոսության տրամաբանությունը կառուցված է այնպես, որ իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը օրենսդրական ամրագրված դրույթներից զատ ունենա կիրարկման շրջանակներ, համաչափության և իրավաչափության մատչելի կարգավորումներ: Հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ հիմնավորվել է քաղաքացիական օրենսդրության այլ ինստիտուտների պաշտպանության հատուկ նորմերի հետ իրավունքի ինքնապաշտպանության հարաբերակցության և դրանց հստակ տարանջատման չափորոշիչները: Ատենախոսության շրջանակներում հիմնավորվում է նաև իրավունքի ինքնապաշտպանության որպես օրենսդրության ընդհանուր դրույթներում ընդգրկված ինստիտուտի կատարելագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև վեր է հանվել օրենսդրության հատուկ դրույթների առանձին ինստիտուտներում իրավունքի ինքնապաշտպանության տարբեր պարունակող նորմերի հիմնախնդիրը:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ, հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտա-

գործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Քաղաքացիաիրավական տեսական աղբյուրներում իրավունքի ինքնապաշտպանությունը դիտարկվում է միմյանցից էականորեն տարբեր լայն և նեղ առումներով: Դրանց համադրությունը կամ առանձին տարրերի ներմուծումը ներպետական իրավական համակարգ կարող է առաջացնել իրավունքի ինստիտուտի սոսկ ձևական ամրագրում, լի կիսալուծումներով և բացերով: Արդյունքում իրավունքի ինքնապաշտպանության նյութական իրավունքում ամրագրված լինելու փաստը դառնում է ածանցյալ դրա դատավարական էությանը: Հիմնավորել ենք իրավունքի ինքնապաշտպանության նյութական իրավական համալիր երևույթ լինելու հանգամանքը, առաջարկելով օրենսդրական լուծումները շարադրել այնպես, որ դրանք համապատասխանեն իրավունքի ինքնապաշտպանության նեղ իմաստային ընկալմանը՝ հաշվի առնելով իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում կատարվող միակողմանի փաստացի գործողությունների իրավական բնույթը: Առաջարկվող բնորոշմամբ սահմանափակվում է նաև պարտավորաիրավական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության գործողությունը՝ պայմանագրային հարաբերությունների կանխատեսելիությունն ապահովելու անհրաժեշտությամբ:

Քաղաքացին իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով ապահովել իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, պահպանելով արարքի համաչափության պայմանները: Պայմանագրային պարտավորությունների առկայության դեպքում, իրավունքների ինքնապաշտպանությունը իրականացվում է պարտավորաիրավական կարգավորումների շրջանակներում:

2. Օրենսգիրքն իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը դիտարկում է իրավունքի պաշտպանության եղանակ, միաժամանակ նախատեսելով իրավունքի ինքնապաշտպանության եղանակների համաչափության և իրավաչափության պայմանները: Առաջանում է իրավահարաբերության ընթացքում դրսևորված վարքագծի պատկանելիության որոշման խնդիր, եթե չսահմանվի իրավունքի պաշտպանության եղանակի և հիմնարար պաշտպանության ձևի հասկացությունները: Այն նաև կչեզոքացնի քաղաքացիական շրջանառության կայունության և կամայական միջամտության ապառնալիքը: Ըստ այդմ, առաջարկում ենք իրավունքի ինքնապաշտպանությունն ամրագրել որպես իրավունքի պաշտպանության ինքնուրույն ձև, սահմանելով օրենքով ամրագրված եղանակը՝ անհրաժեշտ պաշտպանությունը:

Փաստացի կատարված գործողությունների արդյունքում առաջացած վնասի հատուցումը բացառող օրինական հիմք է անհրաժեշտ պաշտպանությունը: Այն հանդիսանում է օրենսդրական ինքնուրույն երաշխիք իրավազոր անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտն այժմ շաղկապվում է դելիկտային պարտավորությունների և վնասի հատուցման ինստիտուտի հետ՝ հանգեցնելով տարընկալումների: Կարծում ենք այս հանգամանքը չի համապատասխանում ինստիտուտի էությանը, որի հետևանքով բացառվում է վերջինիս իրավակիրառելիությունը: Անհրաժեշտ պաշտպանությունը պետք է ամրագրել օրենսգրքի ընդհանուր դրույթներում, նախատեսել նոր 16.1-րդ հոդված, որում անհրաժեշտ պաշտպանությունը օրենսդրության շրջանակներում կդիտարկվի որպես իրավունքի ինքնապաշտպանության եղանակ իր վրա կրելով մայրցամաքային իրավունքում ընդունված «self-defense» ինստիտուտի բեռը:

3. Անհրաժեշտ պաշտպանության քաղաքացիաիրավական կարգավիճակի շտկումը բավարար չէ: Օրենսգրքի նորմերը շարադրված են խիստ անորոշ: Հստակության բացակայությունը հանգեցնում է իրավունքի այլ ճյուղերին հղումների կատարմանը: Այս հանգամանքը խոչընդոտում է քաղաքացիաիրավական հասկացությունների բուն էության բացահայտմանը և որպես անխուսափելի հետևանք առաջացնում է վերը քննարկվող ինստիտուտի պրակտիկ կիրառության անհնարինությանը: Փորձ է կատարվել, տալ իրավական երևույթի բնորոշումը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները մասնավոր իրավունքի շրջանակներում: Որպես այս խնդրի լուծման տարբերակ առաջարկում ենք անհրաժեշտ պաշտպանության հետևյալ բնորոշում.

ա) **Քաղաքացիական իրավունքների խախտում չի համարվում այն արարքը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, իրավազորի շահերը, հասարակության կամ պետության շահերը հակաօրինական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելը, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:**

բ) **Անհրաժեշտ պաշտպանության վիճակում պատճառված վնասը ենթակա չէ հատուցման, եթե չեն գերազանցվել դրա սահմանները: Անհրաժեշտ պաշտպանության սահմանների գերազանցում է համարվում այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք ակնհայտ չեն համապատասխանում հակաօրինական ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:**

4. Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օպերատիվ ներգործության միջոցների և իրավունքի ինքնապաշտպանության առանձնահատկությունները բացահայտված չեն: Վերոգրյալ ինստիտուտների մանրակրկիտ ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական կարևորություն՝ պարզելու օպերատիվ ներգործության միջոցների առկայությունը ՀՀ ներպետական օրենսդրությունում որպես ինքնուրույն իրավական երևույթ, ինչպես նաև ուսումնասիրել վերջինիս ինքնա-

պաշտպանական դրսևորումները:

Օպերատիվ ներգործության միջոցների էությունը բացահայտելով գտնում ենք, որ դրանք զետեղված են պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների ներքո: Հետևաբար օպերատիվ ներգործության միջոցները չենք համարում իրավունքի ինքնապաշտպանության բաղադրատարր: Երկու ինստիտուտների կարգավորման առարկաները միմյանցից էական տարբերվում են, վերջինիս դեպքում սահմանափակվելով միայն պարտավորությունների ապահովմամբ: Թեև օրենսդիրը չի օգտագործում օպերատիվ ներգործության միջոցներ եզրույթը, այն ամբողջությամբ ներառված է Օրենսգրքի կարգավորման առարկայի շրջանակներում:

Առաջարկում ենք օպերատիվ ներգործության միջոցները դիտարկել պարտավորությունների կատարումն ապահովող եղանակներ, որոնց կիրառությունը սպառիչ թվարկված և կանխորոշված է օրենքով և պայմանագրով: Օպերատիվ ներգործության միջոցների վերաբերյալ ծավալուն քննարկում իրականացրել ենք համապատասխան ենթագլխում, ինչպես նաև առկա են եզրահանգումներ եզրակացությունում:

5. Անհրաժեշտ է հստակեցնել առաջին հայացքից կարգավորման նույնական նպատակներ ունեցող իրավունքի ինքնապաշտպանության և Օրենսգրքում առկա իրավունքի պաշտպանության այլ ինստիտուտների միջև փոխհարաբերակցությունը: Այն գործնականում կբացառի իրավունքի ինքնապաշտպանության համար կիրառելի նորմերի ընտրության երկփեղկվածությունը: Անհրաժեշտ է հստակեցնել հատուկ դրույթներում ամրագրված ներխուժման իրավական հնարավորությունը իրավունքի ինքնապաշտպանության համատեքստում: Օրենսգրքի համաձայն, ներխուժումը, որպես փաստացի կատարվող գործողություն անթույլատրելի է, բացառությամբ օրենքով թույլատրված հիմքերի: Այսինքն, օրենքում ուղղակի թույլտվության բացակայությունը հանգեցնում է իմպերատիվ արգելքի՝ ներխուժումը համարելով ոչ իրավաչափ վարքագիծ:

Մենք որպես իրավունքների ինքնապաշտպանության միջոց այն դիտարկելը ևս հնարավոր չենք համարում: Սակայն ներխուժման կանխման կամ վերացման համար կարող է կիրառվել իրավունքների ինքնապաշտպանության իրավական գործիքակազմը: Ներխուժումը կանխելու կամ այն վերացնելու համար կարող են կիրառվել ինչպես փաստացի կատարվող գործողությունները, այնպես էլ անհրաժեշտ պաշտպանությունը: **Ուստի իրավունքների ինքնապաշտպանություն դիտարկում ենք ոչ թե ներխուժումը, այլ դրա դեմ պայքարելու սեփականատիրոջ իրավունքը** (օրինակ՝ 203-րդ հոդվածի 6-րդ մաս):

6. Իրավունքի ամրագրումը բնավ բավարար չէ դրա ողջ ծավալով կիրարկումն ապահովելու համար: Սեփականության իրավունքի իրավազորությունների ապահովումը մեծապես կանխված է դրանց իրականացման

համար նախատեսված երաշխիքներից: Իրացման երաշխիքներից է հանդիսանում պաշտպանության ձևերից իրավունքների ինքնապաշտպանությունը: Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանությունը վերտառությամբ գլխում նախատեսված են առնվազն երկու իրավունքների ինքնապաշտպանության միջոցներ: Դրանք ամրագրված են Օրենսգրքի 274-րդ և 277-րդ հոդվածներում: Սակայն դրանց իրացման համար մեխանիզմները բացակայում են: Առաջարկում ենք օրենսդրությամբ սահմանել իրավունքների ինքնապաշտպանության նոր գործիքակազմ: Իրավախախտին կատարված իրավախախտման մասին ծանուցելու անհրաժեշտությունից ելնելով առաջարկում ենք ներդնել նախնական ծանուցման ինստիտուտը: Այն կնպաստի իրավազոր անձի իրավունքների իրացմանը, ինչպես նաև կօգնի բեռնաթափել դատական համակարգը, սեփականության իրավունքի խախտման հայցերով, իսկ դատավարության ընթացքում այն կհամալրվի ապացուցողական կայուն բազայով: **Առկա երկու հոդվածները անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ: Սեփականատերն այդ մասին պետք է ծանուցի ենթադրյալ իրավախախտին:**

7. Իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրավունքը անձի սուբյեկտիվ իրավունքների իրականացման կարևորագույն երաշխիքներից մեկն է: Իրավունքների ինքնապաշտպանության առավել ընդգրկուն ընկալումը հանգում է նրան, որ օրենսդրությամբ անձին հնարավորություն է տրվում սեփական գործողություններով ներազդելու իր իրավունքների խախտումները վերացնելու կամ կանխելու գործընթացին, ինչպես նաև կանխել կամ վերացնել այդպիսիք: Դրանցից յուրաքանչյուրում առկա են պատմականորեն ձևավորված առանձնահատկություններ, որոնք կապված են ազգային իրավական մշակույթի, սովորութային իրավունքի, իրավամտածողության մակարդակի, սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ գործոնների հետ: Վերոնշյալ գործոններից ելնելով՝ յուրաքանչյուր ներպետական իրավական համակարգ ձևավորում է իր առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք իրենց արտացոլումն են ստանում նաև մասնավոր իրավունքում:

Իրավագիտությանը հայտնի են իրավունքի ինքնապաշտպանության իրավական երաշխիքն ամրագրող երկու հիմնական մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն, ինստիտուտը օրենսդրության ընդհանուր դրույթներում ամրագրվելով հնարավորություն է ընձեռում իրավասու անձանց կամարտահայտությամբ, առանց իրավահարաբերության սահմանափակումների օգտվել իրավունքի ինքնապաշտպանությունից, իսկ երկրորդ մոտեցման հիմքում ընկած է առանձին քաղաքացիաիրավական ինստիտուտների շրջանակներում իրավունքի ինքնապաշտպանության երաշխավորումը:

Գտնում ենք, որ ՀՀ օրենսդրությունը կարգավորումների տեսանկյունից միատեսակ մոտեցում չի դրսևորում իրավունքների ինքնապաշտպանության հարաբերությունների իրավակարգավորման հարցում: Մասնավորապես, ՀՀ

Օրենսգրքում 2017 թվականին ներմուծված հարևանային իրավունքի ինստիտուտնի կարգավորման դեպքում ընտրվել է երկրորդ մոտեցումը, իսկ մինչ այդ կիրառվել է առաջին մոտեցումը: Նշված միանման իրավահարաբերությունների կարգավորման հարցում տարբեր մոտեցումների դրսևորումը կիրառվող և վերաբերելի դրույթների ու գործողությունների գնահատման տեսանկյունից հանգեցնում է իրավաչափ վարքագիծը ոչ իրավաչափից տարանջատելու խնդրին: Առկա տեսական և գործնական խնդիրները լուծելու նպատակով առաջարկում ենք, Օրենսգրքում իրավունքի ինքնապաշտպանությանը վերաբերող նորմերը շարադրել հիմք ընդունելով առաջին մոտեցմամբ ամրագրված տրամաբանությունը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունն այն է, որ սույն աշխատանքում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի վերաբերյալ վեր են հանվել մի շարք տեսական և գործնական խնդիրներ, որոնցով պայմանավորված՝ սույն ատենախոսության եզրահանգումները, ներկայացված գիտական և գործնական առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ սույն ոլորտի հետագա զարգացման, օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման համար, ինչպես նաև տեսական աղբյուր հանդիսանալ հետագա հետազոտությունների համար: Իրավունքի ինքնապաշտպանության իրավական կարգավիճակը, իրավունքի ինքնապաշտպանության իրավահարաբերությունների կարգավորման շրջանակները ևս հանդիսանում են հետազոտության տեսական նշանակության բաղկացուցիչ մասը:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ սույն հետազոտությունը կարող է կիրառվել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության ընթացքում՝ մասնավորապես հիմք հանդիսանալով օրենսդրական հիմնավոր և անհրաժեշտ փոփոխությունների կատարման համար: Բացի այդ, սույն ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ուսումնական դասընթացների, մասնավորապես «Քաղաքացիական իրավունք» դասընթացի շրջանակներում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ներառված ինը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆից:

«Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի հասկացությունը և իրավական բնույթը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ներկայացվել են իրավունքի ինքնապաշտպանության միասնական համակարգը, ինքնապաշտպանական համակարգի զարգացման միտումները՝ ինքնադատաստանից մինչև օրինական հայցեր, իրավունքի պաշտպանության արդի ընկալումները և իրավունքի ինքնապաշտպանության երեք ասպեկտները:

«Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության, որպես իրավունքի պաշտպանության «ոչ յուրիսդիկցիոն» ձևի, կիրառման պայմանները» վերտառությամբ 1.2 պարագրաֆում ներկայացվել են իրավունքների ինքնապաշտպանության իրավական կարգավիճակը, պաշտպանության ձևերը և առաջացրած իրավական հետևանքները:

Երկրորդ գլուխը՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

«Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության եղանակների էությունը և դասակարգումը» վերտառությամբ 2.1 պարագրաֆում ներկայացվել են ինքնապաշտպանության եղանակները, կիրառման նախադրյալները,«self- defense,self-help» ինստիտուտների կառուցակարգերը:

«Օպերատիվ ներգործության միջոցների և ինքնապաշտպանության հարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ներկայացվել են օպերատիվ ներգործության միջոցերի բնութագրիչ հատկանիշները, պայմանագրային հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության կիրառման հարցերը և պարտավորական իրավունքի հարաբերակցությունը ինքնապաշտպանության իրավունքի հետ:

«Ներխուժումը կանխելը կամ վերացնելը և պահումը որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ» վերտառությամբ 2.3 պարագրաֆում ներկայացվել են քաղաքացիական օրենսգրքում իմպերատիվ արգելքներին և իրավունքի ինքնապաշտապնության ընթացքում ձեռնարկվող փաստացի գործողությունների հիմքերը, իրավական հնարավորությունները:

«Անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակներ» վերտառությամբ

2.4 պարագրաֆում ներկայացվել են իրավունքի ինքնապաշտպանության օրենսդրական ամրագրում ստացած եղանակների առանձնահատկությունները, կարգավորման շրջանակները և վնասի հատուցման ինստիտուտից տարանջատման լուծումները:

Երրորդ գլուխը՝ «Քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանության առանձնահատկությունները մասնավոր իրավունքի այլ ինստիտուտների կարգավորումների ներքո» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Պայմանագրային պարտավորությունների կատարմանը նպաստող ինքնապաշտպանության եղանակների հասկացությունը և դասակարգումը» վերտառությամբ 3.1 պարագրաֆում ներկայացվել են քաղաքացիական իրավունքի ինստիտուտների միջև առկա փոխկապակցվածության, հարակից ինստիտուտների նմանությունների ու առանձնահատկությունների բացահայտումը միտված օրինաչափությունները:

«Սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված վինդիկացիոն և նեգատոր պահանջների փոխհարաբերակցությունն իրավունքների ինքնապաշտպանության ինստիտուտի հետ» վերտառությամբ 3.2 պարագրաֆում ներկայացվել են ապօրինի տիրապետումից իրավատիրոջ գույքը հետ պահանջելու և սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումների իրավական հնարավորությունների ամրագրման իրավական երաշխիքները:

«Իրավունքի ինքնապաշտպանության և հարևանային իրավունքի փոխհարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում» վերտառությամբ 3.3 պարագրաֆում ներկայացվել են հարևանային իրավունքը որպես համեմատաբար իրավունքի նոր ինստիտուտի ներդրումը և այդ քողի ներքո իրավունքի ինքնապաշտպանության եղանակների ամրագրման ընդհանուր և հատուկ գիտատեսական մոտեցումները:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Անհրաժեշտ է որոշել օրենսդրական լուծումների ուղղությունը: Եթե պահպանվում է ընդհանուր դրույթներով իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի ամրագրումը, ապա այն պետք է լինի լիարժեք, մատչելի և ընկալելի կիրառման տեսանկյունից: Եթե այն ամրագրվում է հատուկ դրույթներում, ապա յուրաքանչյուր ինստիտուտի դեպքում պիտի նախատեսվեն կիրառման պայմաններ և համաչափության կանոններ: Ներպետական օրենսդրությունը չի որդեգրել նշված մոտեցումներից որևէ մեկը: Փոխարենը միահյուսել է վերը նշված ուղիները: Մենք իրավունքների ինքնապաշտպանությունն ընկալում ենք, որպես օրենսդրության ընդհանուր մաս, միևնույն ժամանակ առանձին ինստիտուտների ամրագմամբ նախատեսում իրավունքի ինքնապաշտպանական վարքագծի դրսևորման շրջանակներ՝ օրինակ,

հարևանային իրավունքի պաշտպանության, սեփականության իրավունքի պաշտպանության և մի շարք այլ դեպքերում: Օտարերկրյա իրավական համակարգերում առկա իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի նկատմամբ ցուցաբերված այլ մոտեցումները բնավ չեն նսեմացնում ազգային գործոնների առանցքային նշանակությունը: Վերջիններս այս կամ այն չափով իրենց վրա են կրում համընդհանուր նախադրյալների ազդեցության հետևանքները: Այդ գործընթացը կարող է ուղեկցվել ինչպես կարգավորումների ընդօրինակմամբ, դրանց ստեղծագործաբար կիրառմամբ, այնպես էլ արդեն իսկ ձևավորված ինստիտուտների համապատասխանեցման եղանակներով: Սակայն, օրենսդրական նոր լուծումների անհրաժեշտությամբ պայմանավորված չենք կարող հաշվի չառնել իրավունքի ազգային ընկալման գործոնը և հայկական իրավական մտքի պատմական զարգացումը:

2. Քաղաքացիական օրենսդրության շրջանակներում կարևոր է ոչ միայն պարտավորությունների այլ նաև իրավունքների իրականացման հնարավորության երաշխավորումը: Քաղաքացիական իրավունքի ինքնապաշտպանության համակարգային վերլուծությունը որպես իրավունքների պաշտպանության, դրա եղանակների վեր հանումը և գիտատեսական կիրառման անհրաժեշտությունը թույլ են տալիս ձևակերպել հետևյալ հիմնական դրույթները:

- Քաղաքացիական իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտ օժտված է ամրագրված սուբյեկտիվ իրավունքների որոշ շրջանակով: Իրավական կառուցակարգերը կոչված են երաշխավորելու խախտված իրավունքի իրավատիրոջ իրավունքները և ապահովելու դրանց վերականգնումը: Այս նպատակին ուղղված են ինչպես իրավական օգնությունը (պետական իրավասու մարմիններ), այնպես էլ իրավունքների ինքնապաշտպանությունը: Այսինքն, իրավունքի կողմից ճանաչված օրինական հնարավորությունը պաշտպանելու սուբյեկտիվ իրավունքները սեփական ուժերով և օրենքով թույլատրելի սահմաններում: Իրավունքի ինքնապաշտպանության առանձնահատկություն են դիտարկում նաև այն հանգամանքը, որ ինքնապաշտպանության կիրարկման համար անհրաժեշտ չէ խախտված իրավունքի ճանաչման կամ դրա վիճարկման հանգամանքները:
- Իրավունքի ինքնապաշտպանության բնորոշ հատկանիշ է դրա իրավական հետևանքի փաստացի բացակայությունը և ոչ յուրիսդիկցիոն բնույթը, որը հնարավորություն է ընձեռում փաստացի գործողությունների առավել լայն շրջանակ ընտրել իրավահարաբերությունների շտկումն ապահովելու համար: Դրա համար անհրաժեշտ է սահմանել իրավունքի ինքնապաշտպանության կարգավիճակը և դրանից բխող հնարավոր գործողությունների համար համաչափության պայմանները:

3) Իրավունքի ինքնապաշտպանության պաշտպանության ձև լինելու հանգամանքի անհերքելի ապացույց են հանդիսանում այն նույնական հատկանիշները, որոնք բնորոշ են իրավունքի ինքնապաշտպանությանն ու քա-

ղաքացիական իրավունքի պաշտպանության այլ ձևերին: Իրավունքի ինքնապաշտպանության գործառույթները, որոնք վկայում են իրավունքի ինքնապաշտպանության բազմակողմ և բազմաշերտ իրավական երևույթ լինելու հանգամանք լինելը հետևյալն են՝

- իրավունքի ինքնապաշտպանական համակարգի նպատակը, որը հանգում է իրավունքի ենթադրյալ խախտման վերացմանն ու դրա վերականգնմանը:
- Իրավունքի ինքնապաշտպանությունը դիտարկում ենք փաստացի գործողությունների, միջոցների համալիր, որոնք ուղղված են իրավախախտումների և իրավախախտների դեմ պայքարելուն:
- Իրավունքի ինքնապաշտպանության եզրույթի ներքո հասկանում ենք իրավասու անձի կողմից իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողությունների կատարում:
- Այս հատկանիշները վկայում են քաղաքացիական ինքնապաշտպանության բազմակողմ և բազմաշերտ իրավական երևույթ լինելու հանգամանքի մասին:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել նաև իրավունքի ինքնապաշտպանությանը բնորոշ հետևյալ առանձնահատկությունները.

✓ իրականացված արարքի բնույթը: Արարքի բնույթ ասելով հասկանում ենք դրա իրականացման օրինական հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Այն է, քաղաքացիաիրավական պաշտպանության կատարումը ինքնապաշտպանության թույլատրելի սահմաններում և համաչափության շրջանակներում:

✓ Ձեռնարկված գործողության նպատակը. Այն է, իրավազորի մոտ ինքնապաշտպանության մտադրության առկայությունը, այլ ոչ թե արարքի կատարումն իրական նպատակների քողարկման համար: Որպես օրինակ կարող ենք քննարկել իրավազոր անձի կողմից իրավունքի ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտության բացակայության մասին համոզմունքը, սակայն, այնուամենայնիվ, ինքնապաշտպանության որևէ միջոցի կիրառմանը դիմելը: Այսինքն, անձը օգտվելով օրենքով տրված իրավական հնարավորություններից կատարում է իրավահարաբերության բնականոն ընթացքի և ինքնապաշտպանության հետ չկապված գործողություններ՝ առաջացնելով փաստացի բացասական հետևանքներ իրավահարաբերության մյուս մասնակցի համար: Օրինակ, իրավահարաբերության բնականոն ընթացքում պահանջում է վճարել գումար կամ պահատվության թողնել որևէ գույք, այն դեպքում երբ գիտակցում է, որ իրավունքի խախտում տեղի չի ունեցել:

✓ Իրավունքի ինքնապաշտպանության ընտրված միջոցը:

Իրավունքի պաշտպանությանը միտված ոչ բոլոր գործողություններն են, որ կարելի է դասել ինքնապաշտպանության միջոցների շարքին: Օրինակ,

դատական կարգով իրավունքի հաստատումը իրավունքի ինքնապաշտպանության միջոց համարվել չի կարող, չնայած այն հանգամանքին, որ ծագել է կողմերից մեկի կամքի արտահայտման արդյունքում:

4) Իրավունքի ինքնապաշտպանությունը հանդիսանալով իրավունքների պաշտպանության ձև, հիմք է ծառայում քաղաքացիական իրավունքի սուբյեկտի համար իր սեփական գործողությունների կատարման միջոցով կանխել իրավունքների խախտումը կամ վերացնել այն: Այս համատեքստում կարևոր է քննարկման առարկա դարձնել նաև իրավազորի (իրավասու անձ) և իրավախախտի փոխհարաբերակցությունը: Իրավունքի ինքնապաշտպանության կարևոր հատկանիշներից է համարվում նաև ինքնապաշտպանության սուբյեկտային կազմը: Իրավունքի ինքնապաշտպանական գործողությունները պետք է ձեռնարկվեն այն անձի կողմից ում իրավունքը խախտվել է և բացառապես այն անձի նկատմամբ, ով համարվում է ենթադրյալ իրավախախտը: Իրավունքի ինքնապաշտպանության առանձնահատկությունները հաշվի առնելով ներկայացնել իրավունքների ինքնապաշտպանության իրականացման եղանակների սպառիչ ցանկ հնարավոր չէ: Դրանք կարող են լինել բազմաբնույթ, իրականացվել փաստացի դրսևորվող իրավասու անձի կողմից ընտրված վարքագծի շրջանակներում, որոնք չեն հակասի օրենքին և դուրս չեն գա ինքնապաշտպանության թույլատրելի սահմաններից:

5) Անհրաժեշտ պաշտպանությունը համարում ենք ինքնապաշտպանության օրենսդրությամբ ամրագրված եղանակներ՝ օժտված որոշակի առանձնահատկություններով:

Անհրաժեշտ պաշտպանության իրավական հնարավորությունը համապատասխանում է իրավունքների ինքնապաշտպանության եղանակներին ներկայացվող պահանջներին: Այն ըստ էության արտացոլում է «self defense» մայրցամաքային իրավունքին հայտնի եզրույթի գործառույթները: Անհրաժեշտ պաշտպանությունը պետք է նախատեսել որպես իրավունքների ինքնապաշտպանության եղանակ և զետեղել օրենսդրության ընդհանուր դրույթներում՝ ամբողջացնելով իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը: Անհրաժեշտ պաշտպանությունը չենք դիտարկում արտապայմանագրային պարտավորությունների կարգավորման դրույթների շրջանակներում, ավելին այն վնասի հատուցումը բացառող հանգամանք է, ուղղված մեկ նպատակի՝ իրավունքի խախտումը կանխելուն կամ վերացնելուն:

Կարևոր է փաստել, որ երրորդ անձանց թվին չեն կարող դասվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց ներգրավումը փոխում է իրավահարաբերության բնույթը և շեղում գործողությունը՝ ինքնապաշտպանություն որակելու հնարավորությունը:

6) Մեր կողմից կատարած դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ օպերատիվ ներգործության միջոցներն ու իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտը միմյանցից անջատ, պաշտպանական համակարգի ինք-

նուրույն ինստիտուտներ են: Պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները այնուամենայնիվ ունենալով որոշակի պաշտպանական գործառույթներ առավել համահունչ են տեսական գրականության մեջ առկա պաշտպանության մեկ այլ ձևի՝ օպերատիվ ներգործության միջոցների կիրառման հետ: Օպերատիվ ներգործության ինստիտուտներից առավել քննարկվածը պահումն է, որպես իրավունքի ինքնապաշտպանության միջոց: Պահումը իրավաչափ է համարվում միայն հետևյալ հիմքերի առկայության դեպքում:

- Գույքի համար վճարելու պարտավորության առկայություն,
- պարտատիրոջ ծախսերը և մյուս վնասները հատուցելու պարտավորություն,
- գույքի համար վճարելու կամ դրա վրա կատարված ծախսերը և այլ վնասերը հատուցելու հետ կապված պարտավորություն,
- պայմանագրով նախատեսված այլ դեպքեր:

Կարծում ենք անհրաժեշտ է տարանջատել պահումը, որպես օպերատիվ ներգործության միջոց և իրավունքի ինքնապաշտպանության ընթացքում պահմանը բնորոշ փաստացի ձեռնարկված գործողությունից: Պահման նպատակը պարտավորաիրավական ներգործության տեսանկյունից ուղղված է պարտավորությունների պատշաճ կատարմանը: Իսկ որպես ինքնապաշտպանության դրսևորում այն ուղղված է իրավունքի պաշտպանությանը:

Գտնում ենք, որ պահում ներգործության միջոցի քաղաքացիաիրավական կարգավորումները չեն կարող տարածվել իրավունքների ինքնապաշտպանության ընթացքում փաստացի իրականացվող գործողությունների նկատմամբ: Այսպիսով, պահում ներգործության միջոցի կարգավորումը տարածվում է պարտավորաիրավական նորմերի վրա, իսկ պահման փաստացի գործողությամբ դրսևորված իրավունքների ինքնապաշտպանության իրավաչափության որոշումը անհրաժեշտ է իրականացնել իրավունքի ինքնապաշտպանության ընդհանուր նորմի, այն է համաչափության պայմանների և թույլատրելի սահմանների հիման վրա:

Բացի վերոգրյալից կարծում ենք մեկ ակնառու տարանջատում ինքնապաշտպանության ինստիտուտից ևս առկա է: Ի տարբերություն օպերատիվ ներգործության միջոցների կամ, որ նույնն է պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների ինքնապաշտպանության իրականացման միջոցների և եղանակների ցանկ օրենսդիրը չի նախատեսում՝ դրա ոչ կիրառելի լինելու և անհնարինության տեսանկյունից:

Ամփոփելով, ցանկանում ենք փաստել, որ ինքնապաշտպանության ինստիտուտը և պարտավորության կատարումն ապահովող միջոցներն ունեն ոչ միայն գործառութային, այլ նաև նպատակային հստակ տարբերություններ: Այս հատկանիշներն են հիմք ծառայում ինքնապաշտպանության տարանջատման և որպես քաղաքացիական իրավունքի լիարժեք ինստիտուտ ամ-

բագրման համար: Այսինքն, քաղաքացիական իրավունքների ինքնապաշտպանությունը քաղաքացիական իրավունքների պաշտպանության նպատակով, օրենքով չարգելված գործողությունների համախումբն է, որը համամասնորեն ներառում է իրավունքների և օրինական շահերի խախտումների կանխարգելումը և վերակազնումը:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության պայմանները, Արդարադատություն, Թիվ 2(48), ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ հրատ., Երևան, 2019 33-40 էջեր:
2. Իրավունքի ինքնապաշտպանության և հարևանային իրավունքի փոխհարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում, Դատական իշխանություն, Թիվ 9-10, ՀՀ Դատավորների միություն ՀԿ հրատ., Երևան, 2019, 93-98 էջեր:
3. Իրավունքի ինքնապաշտպանությունը որպես քաղաքացիական իրավունքների պաշտպանության ձև, Պետություն և իրավունք, Թիվ 84-85, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, 109-116 էջեր:
4. Օպերատիվ ներգործության միջոցների և ինքնապաշտպանության հարաբերակցությունը քաղաքացիական իրավունքում, Օրինականություն, Թիվ 120, ՀՀ Դատախազություն հրատ., Երևան, 2020, 62-66 էջեր:
5. Քաղաքացիաիրավական ինքնապաշտպանության և անհրաժեշտ պաշտպանության տարորոշման հիմնահարցը, Արդարադատություն, Թիվ 1(53), ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ հրատ., Երևան, 2021, 55-61 էջեր:
6. Քաղաքացիական հարաբերություններում իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի իրավահամեմատական վերլուծություն, Դատական իշխանություն, Թիվ 3-4, ՀՀ Դատավորների միություն ՀԿ հրատ., Երևան, 2021, 105-114 էջեր:
7. Проблемы самозащиты права в гражданском праве Армении, Регион и Мир, Թիվ 4, Общественный институт политических и социальных исследований Черноморского-Каспийского региона հրատ., 2021, 57-60 էջեր:
8. Սեփականության իրավունքի պաշտպանության և իրավունքների ինքնապաշտպանության փոխհարաբերակցությունը, Գիտական Արցախ, Թիվ 2(9), Արցախ հրատ., Երևան, 2021, 140-147 էջեր:
9. Իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտի որոշ հիմնախնդիրները ՀՀ քաղաքացիական իրավունքում, Օրինականություն, Թիվ 132, ՀՀ Դատախազություն հրատ., Երևան, 2022, 10-15 էջեր:
10. «Պայմանագրային պարտավորությունների կատարմանը նպաստող ինքնապաշտպանության եղանակներ», հասկացությունը և դասակարգումը, Պետություն և իրավունք, Թիվ 3 (94), ԵՊՀ հրատ., Երևան, 2022, 57-62 էջեր:

АННА АРАЕВНА МКРТЧЯН

ПРАВО САМОЗАЩИТЫ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ

РЕЗЮМЕ

Начиная с римского права, право самозащиты закреплено как возможное действие, направленное против различных посягательств. Со временем и развитием гражданско-правовых отношений восприятие института самозащиты права во многом поменялось. Соответственно менялись и правовые регулирования, нормы. Но цели института не были изменены, и до сих пор самозащита гражданских прав является основопологающим феноменом в системе защиты частных прав.

Основная цель сегодняшнего законодательства - гарантия прав самозащиты как законное действие в ряду гражданских прав. Институт самозащиты гражданских прав был определен как форма защиты гражданских прав. Институт самозащиты права в гражданском праве имеет различные правовые регулирования в разных правовых системах. Это связано с различными факторами: как правовыми, так и национальными. Одним из важнейших правовых факторов является правовая семья, к которой близка правовая система, в которой регулируется институт самозащиты гражданских прав.

Современная правовая система представляет собой явление, обеспечивающее правовую возможность не только реализации личных прав, но и их защиты. Также необходимо не забывать, что право, закрепленное за лицом законодательством, но не обеспеченное формами защиты, носит декларативный характер. Наряду с политическими, экономическими, социальными и иными мерами правовые меры призваны обеспечить необходимые условия для реализации субъективных прав личности. В этом контексте самозащита гражданских прав играет важную роль в частном праве. Выявление взаимосвязанности договорных отношений между институтами самозащиты гражданского права, сходства и особенностей институтов направлено на развитие практического применения этих институтов.

Предметом обсуждения стали правовые последствия при самозащите права и договорных обязательств. Рассмотрено также соотношение фактических односторонних действий, предпринятых при праве на самозащиту как способа отказа от договорных обязательств.

Отображены не только признаки самозащиты, но дана их характеристика как института гражданского права. Таким образом,

институт самозащиты гражданских прав был определен как форма защиты гражданских прав.

Было предложено закрепить определение права на самооборону в положениях общей части гражданского законодательства. Во всех остальных случаях для каждого института частного права или регулирующих отношений зафиксировать действия, предпринимаемые во время самозащиты права применимыми методами.

Принято считать, что способы защиты собственности – это совокупность гражданско-правовых норм, которые обеспечивают реализацию прав собственности. Но вопросы об общей системе защиты прав, самозащиты прав и способы защиты собственности остаются предметом размышления. Изучены правовые аспекты различных способов защиты права, в том числе самозащита права и способы защиты собственности. Считаем, что самозащита в широком смысле содержит и иски по защите прав собственности. Надо отметить, что в гражданском кодексе РА говорится о праве требования, а не об иске.

Отображены и проанализированы нормы соседского права. Соседское право - относительно новый инститит в гражданском кодексе РА. Уделено внимание анализу различий и сходств самозащиты права, соседского права, а также нормам, регулирующим соседские взаимоотношения.

Целью диссертации является изучение и анализ прав самозащиты. Предлагается ввести новые законодательные нормы, которые помогут более конкретно урегулировать самозащиту прав, дав возможность практического применения института.

Научная новизна диссертации заключается в том, что это первое комплексное исследование теоретических и практических вопросов института самозащиты права в рамках отечественной юриспруденции. Автор попытался проанализировать как теоретические, так и практические проблемы, которые могут возникнуть при применении самозащиты.

В результате были сделаны как теоретические обобщения, так и научно-практические предложения. Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, поскольку представленные автором предложения и выводы могут быть использованы для внесения изменений в законодательство и правоприменительную практику.

Основные положения диссертации нашли свое отражение в положениях, выносимых на защиту диссертации и в опубликованных автором научных статьях.

ANNA ARA MKRTCHYAN

SELF-DEFENSE INSTITUTE IN CIVIL LAW

SUMMARY

Starting from Roman law, the right of self-defence is enshrined as a possible action against various encroachments. Over time and with the development of civil relations, the perception of the institution of self-defense has changed in many ways. Legal regulations and norms have also changed. But the goals of the institution have not changed, and so far the self-defense of civil rights is a fundamental phenomenon in the system of protection of private rights.

The main purpose of today's legislation is to guarantee the rights of self-defense as a legal act in a system of civil rights. Within the institution of civil rights self-defence has been defined as a form of defense. The institution of self-defense of law in civil law has various legal regulations in different legal systems. This is due to various factors: both legal and national. One of the most important legal factors is the legal family, which is close to the legal system, which regulates the institution of self-defense of civil rights.

One of the modern gaols of law is a phenomenon that provides a legal opportunity not only for the realization of personal rights, but also for their protection. It is also necessary not to forget that the right assigned to a person by legislation, but not provided with forms of protection, is declarative. Along with political, economic, social and other measures, legal measures are designed to provide the necessary conditions for the realization of the subjective rights of the individual. In this context, the self-defence of civil rights plays an important role in private law.

The identification of the interconnectedness of contractual relations between the institutions of self-defense of civil law, the similarities and features of institutions is aimed at developing the practical application of these institutions.

The subject of discussion was the legal consequences of the self-defense of the right and contractual obligations. The ratio of the actual unilateral actions taken with the right to self-defense as a way of waiving contractual obligations is also considered.

Not only signs of self-defense are displayed, but their characteristics as an institution of civil law are given. Thus, the institution of self-defense of civil rights was defined as a form of protection of civil rights.

It was proposed to consolidate the definition of the right to necessary protection in the provisions of the general part of civil legislation. In all other

cases, for each institution of private law or regulatory relations, fix the actions taken during the self-defense of law by applicable methods.

It is generally accepted that the ways of protecting property are a set of civil law norms that ensure the implementation of property rights. But issues about the general system of protection of rights, self-defense of rights and ways to protect property remain the subject of reflection. The legal aspects of various ways of protecting property rights, including self-defense have been studied. We believe that self-defence in a broad sense also includes claims for the protection of property rights. It should be noted that the Civil Code of the Republic of Armenia refers to the right to claim, and not to the judicial claim.

The norms of neighbor law are displayed and analyzed. Neighborhood law is a relatively one of the new institutions in the Civil Code. Attention is paid to the analysis of differences and similarities in the self-defense of law, neighborly law, as well as the rules governing neighborly relations.

The purpose of the thesis is to study and analyze the rights of self-defence. It is proposed to introduce new legislative norms that will help to more specifically regulate the self-defense of rights, enabling the practical application of the institution.

The scientific novelty of the thesis lies in the fact that this is the first comprehensive study of theoretical and practical issues of the institution of self-defense of law within the framework of domestic jurisprudence. The author tried to analyze both theoretical and practical problems that may arise when applying self-defense.

As a result, both theoretical generalizations and scientific and practical proposals were made. The dissertation has not only theoretical but also practical significance, since the proposals and conclusions presented by the author can be used to make changes to the legislation and law enforcement practice.

The fundamental provisions of the thesis have been reflected properly in the provisions presented to the defense of the thesis and in the scientific articles published by the author.